ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 439-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Չափորոշչի նախագծում ներկայացված են մի շարք ուշագրավ և ընդունելի մոտեցումներ, այդ թվում.

- 7-րդ դասարանից սկսած աշակերտների կողմից մեկ կամ մի քանի առարկայի շրջանակներում նախագծային աշխատանքների կատարումը:
- Ավագ դպրոցում պարտադիր առարկաների համադրությամբ անհատականացված դասացուցակով դասերի կազմակերպման ներդրումը:
- Ավագ դպրոցում մոդուլային և կրեդիտային ուսուցման ներդրումը:
- Տարրական դպրոցում քիչ թվով առարկաների ներառմամաբ ինտեգրված, միջին դպրոցում առանձնացված առարկայական, իսկ ավագ դպրոցում՝ ինտեգրված ուսուցման հնարավորության ապահովումը:
- Սովորողներին ներկայացվող պահանջների ձևավորումը վերառարկայական կարողունակությունների միջոցով:
- Դպրոցների կողմից սեփական ուսումնական պլանները ձևավորելու հնարավորությունը:
- Գնահատման սանդղակի վերանայման միջոցով երկտարեցիության վերացումը:
- Գնահատման կոնցեպտուալ փոփոխությունը՝ կարևորելով ձևավորող գնահտումը:
- Ուսումնական պլանում անհատական բաղադրիչի ներդրումը: Սրա հետ մեկտեղ նախագծում տեղ են գտել մի շարք մտահոգիչ և վիճահարույց մոտեցումներ, որոնց վերաբերյալ ներկայացնում ենք մեր առաջարկությունները և մեկնաբանությունները:

1. «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորումը» բաժնի 1-ին կետը՝ այն է «Հանրակրթության պետական չափորոշիչը ձևավորվում է հանրակրթական հիմնական ծրագրերի հետևյալ բաղադրիչներից» պետք է վերաշարադրվի և չափորոշչի ձևավորման տրամաբանությունը փոխվի, քանի որ առաջարկվող նախագծով՝ նախկինի նման, պետական չափորոշչի ձևավորումը սահմանափակվում է հանրակրթական հիմնական ծրագրերի շրջանակներում՝ այն դարձնելով ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի և դրանց համապատասխան ուսուցման կազմակերպման ձևերի, միջոցների ու մեթոդների ամբողջություն: Այնինչ Հանրակրթության մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ հանրակրթության պետական չափորոշիչը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի բաղադրիչները: Այսինքն պետական չափորոշիչը պետք է ձևավորվի ոչ թե միայն հանրակրթական հիմնական ծրագրերի բաղադրիչներից, այլ պետք է ունենա ձևավորման ավելի լայն սպեկտր՝ մեր կարծիքով ներառելով նաև նպատակներ և տեսլականներ: Կարևոր է այն հանգամանքը, որ նախագծում, կարողունակությունները սահմանող կետում նշվում է, որ «Կարողունակությունները … բխում են հանրակրթության հիմնական նպատակներից»: Սակայն նախագծում չեն ներկայացված հանրակրթության հիմնական նպատակները, ուստի և բացակայում են այն չափանիշները, որոնցով հնարավոր կլինի որոշել, թե որքանով նպատակային և որքանով ամբողջական ու լրիվ են շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝

կարողունակությունները: Նմանապես ներկայացված չեն տարրական կրթության, հիմնական կրթության և միջնակարգ կրթության նպատակները, ուստի հնարավոր չէ որոշակի վերաբերմունք արտահայտել համապատասխան կրթական աստիճանների համար ներկայացված վերջնարդյունքների վերաբերյալ: Հետևաբար առաջարկվում է վերը նշված 1-ին կետը շարադրել հետևյալ կերպ՝ «Հանրակրթության պետական չափորոշիչը ձևավորվում է միջնակարգ կրթության ծրագրերի նպատակներից, հանրակրթության արդյունքում ձևավորվող շրջանավարտի տեսլականից և հանրակրթական հիմնական ծրագրերի հետևյալ բաղադրիչներից»: Այս առաջարկն ընդունելի լինելու պարագայում կառաջանա անհրաժեշտություն առանձին բաժիններով սահմանել հանրակրթության արդյունքում ձևավորվելիք շրջանավարտի տեսլականը և միջնակարգ կրթության նպատակները՝ ըստ կրթական աստիճանների, որոնք համահունչ կլինեն Հանրակրթության մասին օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածների դրույթներին:

2. Կա մի անորոշություն ևս: «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորումը» բաժնի 1-ին կետը սահմանում է, որ «Հանրակրթության պետական չափորոշիչը ձևավորվում է հանրակրթական հիմնական ծրագրերի բաղադրիչներից», իսկ «Հանրակրթության պետական չափորոշիչ» բաժնի 3-րդ կետը սահմանում է, որ «Հանրակրթական հիմնական ծրագրերը (տարրական, հիմնական և միջնակարգ) մշակվում են Չափորոշչի նորմերին և դրույթներին համաձայն»: Ստացվում է, որ նախագծով առաջարկվող Չափորոշիչը ձևավորվում է հանրակրթական հիմնական ծրագրերից, իսկ հանրակրթական հիմնական ծրագրերը մշակվում են Չափորոշչին համաձայն՝ այսինքն ունենք անհասկանալի ու փակ շրջան:

3. Համակարգված և դասակարգված չեն նաև շրջանավարտներից ակնկալվող վերջնարդյունքները: Դժվար է համադրել կրթական տարբեր աստիճանների շրջանավարտներից ակնկալվող վերջնարդյունքները և նկատել դրանց շարունակականությունն՝ ըստ ծրագրերի: Շատ դեպքերում ուղղակի չկա տրամաբանական շարունակականություն կրթական ծրագրերին վերաբերող վերջնարդյունքներում, իսկ որոշ դեպքերում հիմնական ծրագրից ակնկալվում է ուսումնառության ավելի բարդ վերջնարդյունք, քան միջնակարգ ծրագրից:

Օրինակ 1. «Դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր» (հիմանական կրթության պահանջ) և «ուրիշների հետ համագործակցելով և ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր՝ ձեռք բերած գիտելիքը կամ գործնական արդյունքը ներկայացնելով տարբեր միջոցներով» (միջնակարգ կրթության պահանջ):

Օրինակ 2. «Կիրառի տարածական մարմինների մասին գիտելիքները կյանքում և տարբեր ուսումնական առարկաներ ուսումնասիրելիս» (միջնակարգ կրթության պահանջ) և «կիրառի երկրաչափական պատկերների և մարմինների մասին գիտելիքներն ամենօրյա կյանքում և հարակից ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս» (հիմնական կրթության պահանջ) Նախագծում նմանատիպ բազմաթիվ օրինակներ կան, երբ հնարավոր չէ որոշել, թե որակական ինչ տարբերություններ կան կրթական տարբեր աստիճանների վերջնադրույքների միջև:

4. Համաձայն «Միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակությունները և հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները» բաժնի 3-րդ կետի՝ վերջնարդյունքներն ուղղված են

կարողունակությունների ձևավորմանը: Սակայն շատ դժվար է հասկանալ, թե որ վերջնարդյունքը որ կարողունակության ձևավորմանն է ուղղված: Առաջարկում ենք վերջնարդյունքները դասակարգել և աղյուսակավորել ըստ ձևավորվելիք կարողունակությունների և ըստ միջնակարգ կրթության ծրագրերի, որպեսզի հստակ երևա, թե որ վերջնարդյունքը, որ կարողունակության ձևավորմանն է ուղղված և նկատելի լինի սահմանվող վերջնարդյունքների տրամաբանական զարգացումը միջնակարգ կրթության ծրագրերում:

5. Նախագծում, փաստորեն, փոխվում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված «Հանրակրթության պետական չափորոշիչ» հասկացության բովանդակությունը, փոխարենը չի տրված նոր սահմանում: Օրենքի համաձայն հանրակրթության պետական չափորոշիչը՝ որպես նորմատիվ փաստաթուղթ, «սահմանում է հանրկրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը»: Ամենավիճահարույց հարցն այն է, թե ինչու է կրթության բովանդակությանը ներկայացվող պահանջները հանվել չափորոշչի նախագծից՝ կարծելով, թե իբր շրջանավարտներին ներկայացվող պահանջներից կբխեն բովանդակությանը վերբերող պահանջները ևս: Մոլորությունը հենց այդ կարծիքի մեջ է: Բանն այն է, որ շրջանավարտներին ներկայացվող պահանջների ապահովումը մի շարք գործոններից է կախված, իսկ կրթության բովանդակությունը այդ գործոններից մեկն է, ոչ թե միակը: Ուստի կրթության բովանդակության ձևավորումը առանձին կանոնակարգում է պահանջում: Եթե չափորոշչում ձեռնպահ ենք մնում այդ կանոնակարգումից, ապա պարտավոր ենք առնվազն ներակայացնել դրա ձևավորման սկզբունքները: Չափորոշչում պետք է լինեն նաև ուղղորդումներ ուսումնական բնագավառների բովանդակությունների վերաբերյալ: Հակառակ դեպքում ոչ միայն կխաթարվի երկրի կրթական տարածքի միասնականությունն, այլև կտիրի բովանադակային քաոս: Նույնը վերաբերում է նաև ուսումնական առարկաների ձևավորմանը. նախագծում հաճախ օգտագործվող «առանձին առարկաներ» բառակապակցությունը բովանադակային առումով չափազանց անորոշ է և կանաչ ճանապարհ է բացում ակտիվ և ազդեցիկ ուժերի նախասիրությունների ու շահերի դրսևորման համար: Այդպիսի մոտեցման արդյունքում լուրջ դժվարություններ կծագեն սովորողների շարժունության համար, որը առավել սուր կարտահայտվի հատկապես հիմնական դպրոցից ավագ դպրոց տեղափոխվելու ժամանակ, երբ նույն դասարանում կհայտնվեն տարբեր առարկաներ ուսումնասիրած աշակերտներ:

6. Նախագծում սահմանված է «ուսումնական բնագավառ» հասակացությունը, և պետք է նկատել, որ միանգամայն ընդունելի սահմանում է: Սակայն ներկայացված ուսումնական բնագավառների մի մասը այդ սահմանմանը չի համապատասխանում: Այդպիսի բնագավառ է օրինակ, ԲՏՃՄ-ն: Մի՞թե որևէ մեկը կպնդի, թե բնագիտության, ճարտարագիտության և մաթեմատիկայի ուսումնառության օբյեկտները և ճանաչողության մեթոդները այնքան են միանման, որ կարող են կազմել մեկ որոշակի բնագավառ: (Ի դեպ՝ ԵՄ-ի կրթական ծրագրերով այդ առարկաներին ուղղված աջակությունից ամենևին չի բխում, որ դրանք ներկայացնում են մեկ ուսումնական բնագավառ): Ուսումնական բնագավառների նախագծում ներկայացված տարբերակում ստացվում է, որ հայոց պատմությունն ու համաշխարհային պատմությունը հայտնվել են տարբեր ուսումնական բնագավառներում, իսկ հայրենագիտության բնագավառը ներկայացվել է առանց արվեստների ու արհեստների:

7. Տարրական դպրոցում առարկաների ինտեգրված ուսուցման վերաբերյալ դրույթը միանգամայն ընդունելի է: Սակայն նախագծում ցուցաբերված է այդ դրույթին հակասող մոտեցում. մի դեպքում խոսվում է չորս ուսումնական բնագավառներ ներակայացնող՝ մարդուն և շրջակա աշխարհին վերաբերող ինտեգրված առարկայի մասին, իսկ մյուս դեպքում՝ որպես մաթեմատիկական առանձին առարկա անսպասելիորեն ներկայացվում է շախմատ խաղը: Այդ մոտեցումը անհարիր է և՛ մաթեմատիկայի, և՛ շախմատի համար:

8. Առաջարկվում է նախագիծը խմբագրական առումով վերաշարադրել, քանի որ այն փաստաթղթային տեսքի բերված չէ.

- չափորոշչային պահանջները, դրույթները, հատկապես վերջնարդյունքները կանոնավորված, համակարգված և միասնական համարակալումով չեն ներկայացված, ուստի և չափազանց դժվարանում է փաստաթղթի ընկալումը, օգտագործումը, հղումներ կատարելը և այլն,

- հաճախ են հանդիպում անհստակ, երբեմն անիմաստ բառակապակցություններով ներկայացված հասկացություններ, ինչպես օրինակ՝ «տարրական ծրագիր», «միջնակարգ ծրագիր», «տարրական ծրագրի շրջանավարտ», «հիմնական ծրագրի շրջանավարտ» և այլն: Եզրաբառերի անկազմակերպ գործածումը, ինչը սփռված է ողջ փաստաթղթում, անլրջություն է հաղորդում նյութին,

- նախագծի ձևակերպումներում տեղ են գտել որոշ առանցքային դրույթների իմաստային քողարկված ձևափոխումներ.

Օրինակ 1. Չափորոշչի ձևավորման կարգում որպես բաղադրիչ նշված է «կրթության բովանդակության բաղադրիչներ», չափորոշչի 3–րդ բաժնի վերնագրում և առաջին կետում նշված է «Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակությունը», իսկ դրան հաջորդող կետում արդեն ներկայացված է «Հանրակրթության բովանդակության բաղադրիչները»: Արդյունքում անհասկանալի է մնում, թե գիտելիք, հմտություն, դիրքորոշում, արժեքային բաղադրիչ կոչվող բաղադրիչները վերաբերում են հանրակրթական հիմնական ծրագրերին, թե հանրակրթությանը:

Օրինակ 2. Չափորոշչի ձևավորման կարգում որպես բաղադրիչ նշված է «սովորողների գնահատման ձևեր», չափորոշչի առաջին կետում՝ «սովորողների գնահատման համակարգի սկզբունքները», իսկ գնահատմանը վերաբերող բաժնում՝ «սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքները»: Այսպիսով, եթե անգամ վերանանք նախագծի դրույթների բովանդակային հարցերից, միևնույն է, փաստաթուղթը խմբագրական առումով ամբողջությամբ վերաշարադրման կարիք ունի:

Ելնելով վերոշարադրյալ մեկնաբանություններից՝ անհրաժեշտ ենք համարում.

1. Շրջանառությունից հանել «Հայաստանի հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը:

2. Վերամշակել «Հանրակրթության պետական չափորոշչի ձեվավորման եվ հաստատման» կարգի և «Հանրակրթության պետական չափորոշչի» նախագծերը՝ փոխելով դրանց տրամաբանությունը, կառուցվածքը, բովանդակությունը՝ ապահովելով ձևավորման և շարադրանքի պատշաճ մակարդակ:

3. Նախագծի վերամշակված տարբերակը նորից ներկայացնել մասնագիտական և հանրային քննարկման: